2023 Թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին

2022-07-26

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 124-Ն
26.07.2022

2023 Թվականի թողարկման «Նոյյան տապան»
արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությ
ունը հաստատելու մասին

Հրապարակման ամսաթիվ՝ 04.08.2022

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

2022 թվականի նոյեմբերի 22-ից շրջանառության մեջ դնել 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան

հաջորդող օրվանից:

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022թ. հուլիսի 29, ք. Երևան